ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«10» հունվարի 2019 թվականի N 01-Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 24-րդ և 30-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի 2019 թվականի տարեկան ծրագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի պետ Կարեն Թորոսյանին և գլխավոր մասնագետ Վահան Մարգարյանին, 2019 թվականի հունվարի 15-ից մինչև փետրվարի 26-ը (30 աշխատանքային օր) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ենթակայության տակ գտնվող «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի գնումների համապատասխանության և 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համակարգի գնահատման աուդիտ:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

1/10/2019

X

VERIFIED OCSP 1/10/2019 15:22:25 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ